

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

----- 2018 թվականի N-----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշման N 11 հավելվածում կատարել 3 փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2 հավելվածների:

2. 2018 թվականի Ռուսաստանի Դաշնության Պերմ քաղաքում ԱՊՀ երկրների դպրոցականների 6-րդ մարզական միջազգային փառատոնի մրցումներին մասնակցելու նպատակով 2018 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը հատկացնել 8024.0 հազար դրամ, Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը բխում է հայ աշակերտների 2018 թվականի նոյեմբերի 3- ից 9-ը ընկաց ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնության Պերմ քաղաքում կայանալիք ԱՊՀ երկրների դպրոցականանների 6-րդ միջազգային մարզական փառատոնի մրցումներին մասնակցելու նպատակով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2011 թվականից Հայաստանի Հանրապետության դպրոցականները մասնակցում են համաշխարհային <<Գիմնազիադա>> աշխարհի առաջնության մրցումներին և ԱՊՀ երկրների դպրոցականանների մարզական միջազգային փառատոնի մրցումներին: Այս մրցումները հարստացնում և ամրապնդում են մատաղ սերնդի ինտեգրումը միջազգային մրցաշարերին: Դրա մասին վկայում է մեր դպրոցականների ցուցաբերած լուրջ մարզական արդյունքը: Անհրաժեշտ է պահպանել լավագույն ավանդույթները, շարունակական դարձնելով դպրոցականների առօրյայում օլիմպիական շարժման սկզբունքները:

Կարևորելով հայ աշակերտների մասնակցությունը Ռուսաստանի Դաշնության Պերմ քաղաքում կայանալիք ԱՊՀ երկրների դպրոցականների 6-րդ միջազգային մարզական փառատոնի մրցումներին, նախարարությունը առաջարկում է 8024.0 հազ. դրամ գումարը տրամադրել << կառավարության պահուստային ֆոնդի հաշվին: Հայտնում են, որ 2018 թվականի

սեպտեմբերի 20-ին <<Դպրոցականների Հանրապետական Մարզական Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությունը ՀՀ պետական բյուջե է վերադարձրել 10285.3 հազ. դրամ չօգտագործված գումար, որը տրամադրվել էր <<Դպրոցականների Հանրապետական Մարզական Ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությանը ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1601-Ն որոշմամբ, Մարոկոյում կայանալիք «Գիմնազիադա» համաշխարհային խաղերի մասնակցությունն ապահովելու նպատակով:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Սույն որոշման ընդունման արդյունքում կապահովվի Ռուսաստանի Դաշնության Պերմ քաղաքում կայանալիք ԱՊՀ երկրների դպրոցականների 6-րդ միջազգային մարզական փառատոնի մասնակցությունը, որը կհարստացնի և կամրապնդի մատաղ սերնդի ինտեգրումը միջազգային մրցաշարերին: Դրա մասին վկայում է մեր դպրոցականների ցուցաբերած լուրջ մարզական արդյունքները:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցները:

Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը.

Հայաստանի Հանրապետության կառավարության սույն որոշման նախագծի ընդունման արդյունքում կհարստացվի և կամրապնդվի մատաղ սերնդի ինտեգրումը միջազգային մրցաշարերին:

Այլ տեղեկություններ.

Չկան:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

Ձի առաջացում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ
համապատասխանությունը.

Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ.

Չկան:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ:

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ ֆինանսների նախարարություն 16.10.2018 թ թիվ 01/9-2/18588-18 գրություն	ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:	Ընդունված է:	
ՀՀ արդարադատության նախարարություն 31.10.2018 թ թիվ 01/14/626351-18 գրություն	Նախագծի 1-ին կետը և նախագծով հաստատված հավելվածների վերնագրերն անհրաժեշտ է համապատասխանեցնել նախագծի վերնագրի պահանջներին:	Ընդունված է:	Փոփոխությունը կատարված է: